Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

5084
150
171-ՁԱ
171.9
Ջ-29

Ա. ՋԱՆԵԱՆ

# ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ...
ССРА ... ичная Биб иоте...
7/ ... 1922
имени А. Мясник... на
Ա. ՄՅԱՍ ...ՅԱՆԻ ԱՆՎԱ

Գինն է 10 կոպ.

ԲԱԳՈՒ
1906

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

*Անմոռանալի Խմ. Կոլոտ «Եսս»-ի,*
*Դէպ անարգ կամքը— 7*
*Մի սկզբունք է:*

ԹԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ...
...ичная Би...
имени А. Мясникяна
29 JUL 2009

*Քաղաքական մի այսպիսի ծանր մթնոլորտում, երբ իրերի դրութիւնը անողոք վճռականութեամբ իւր պահանջն է անում, բնական է, որ անկախ միտքը պիտի ունենայ և անկախ հետեւող (մարմին) որ յորձանքների տարերային թափից, թոյլ չ'տայ շեղւելու դողացող կայծը. այստեղ արդէն գիտակցական աշխատանքն է, որ առանց հոգու մասնակցութեան՝ երբէք չի կարող կանոնաւոր համարուել, որովհետև անհատին ղեկավար հանդիսացող սեփական միտքը, հեռու է այդ խնդրին գործօն հանդիսանալուց։ Բայց որ կեանքը, մինչև այսօր իւր աջողած տեղի բերանով, արտահայտել է թէկուզ հենց մաշւած անիմաստութիւն, ու անպէտքութիւն, այդ երեւում է նրանից, որ յենւելով մեր առաջին նախահօրից սկսած մինչև մեր օրերի փորձի վրայ, մենք երբէք չ'կարողացանք իմանալ կեանքի էութեան իմաստն ու նպատակը, բացի «ծնուել ենք ապրելու համար» աշխարհային ասացւածքից։*

*Հիասթափութիւնը կատարւում է ջարդւած բանակի մէջ, յուսախաբութեան միջոցին, կամ իլլուզիաներից յետոյ. Ենթադրենք մի րոպէ, որ ես հիասթափւած չեմ և կուրօրէն*

5 SEP 2013

5084



կատարում եմ այն, ինչ որ թելադրում է կեանքը։ Եւ ահա կրքի ազդեցութեան տակ ես արտադրում եմ մի ինձնից անգիտակից զոհ, որի անհրաժեշտութիւնը բղխած չէ նոյնպէս կեանքի՝ և իր իմաստի տեսակէտից։ Կիրքը մի այնպիսի Աստուած է որի հպատակութիւնը աւելի շատ են ընդունում մարդիկ, քան տասն պատուիրանը Մովսէսի ներկայութեամբ, և եթէ ինձ մնար ու հնարաւոր լինէր, ես կառաջարկէի կտրել այն բոլոր երակները, որոնք կիրք են արտադրում։

Լուրջ ու խոհուն մարդը, կրքի ազդեցութեան տակ անասնանում է, և մոռանում իր ով լինելը. սակայն չէ պատահում նոյնպէս, կրքից կուրացած մարդուն տեսնել, իր զոհի առաջ գազանաբար քրքջալիս։ Այդպիսով արդէն հաստատւում է այն փաստը, որ մի մղիչ ոյժ բռնէապէս անասնացած, ինքնամոռացման ժամին բոլորովին անգիտակից՝ ու կուրօրէն կերպով գործօն հանդիսանար այնպիսի մի իրի պատրաստման, որպիսին անմտածւած ծնունդն է։ Ինքնըստինքեան պարզ է, որ այդ յիմար գործում կիրքը իր ուսերի վրայ է առնում $^3/_4$ մասը այն բեռի, որը վիճակւել է կեանքի անգիտակցման. այս ձևով դուրս է գալիս, որ կիրքը իր գործադրութեան մէջ, եթէ մարդուն անասնացման ու ինքնամոռացման չ'հասցնէր, հետևապէս և չէր լինի այն «անկամք» մեքենան, որը գործել յանձն առնէր առանց իր գործադրութեան էութեան իմաստն՝ ու նպատակը ըմբռնելու։ Քողարկելով անքննելութեան մէջ կեանքի իմաստն ու նպատակը, մենք մեզ նմանեցրել ենք այն մեքենային, որը շոգիի ազդեցութեան տակ թափահարում է իր թևերը, ինքն էլ չիմանալով թէ ինչու համար. եթէ իրապէս մենք անգիտակից մեքենաներ չենք ապա ուրեմն մեզ հարկաւոր է իմանալ —թէ ինչու ենք թափահարում մեր թևերը։ Գիտունների կարծիքով հիւանդութիւնը ժառանգաբար անցնելու ստիպու-



թիւն ունի. եթէ իսկապէս ալկօհոլիստ հայրը, որդիների կամ թոռների մէջ իր պատկերը դարձեալ ցոյց տայ, այդ արդէն նշանակէ, որ գործադրութեան ժամին կրքի ազդեցութիւնից դուրս, մարդու լրջութիւնն ու մտածութիւնը իր յատուկ նշանակութիւնը ունի սերունդի գիտակցութեան վերաբերմամբ. կրքից կուրացած մարդը չի զգում նոյն րոպէի իր գործադրութեան արժէքը, այլ այն՝ — թէ երբ բաւականութիւն կ'ստանայ անասնական հաճոյքի մէջ. և ահա, ինն ամսից յետոյ ձեր գործած հանցանքի պտուղը, նոյնքան անմիտ որքան դուք, ո՛ր անհրաժեշտութիւնից բղխած, ո՞ւմ, և ինչո՞ւ համար ինքներդ էլ չ'գիտէք. իր կամքի հակառակ, ծնողների անմիտ վարմունքից գոյացած մի [illegible], որ ոչ մի բանի պէտք չէ (այդ ապացուցել է իր հայրը) բացի նոր զոհեր աւելացնելուց...

Այժմ ինչպէս հաշտւեմ այն խնդրի հետ, որ իմ ամենագլխաւոր զանգւածը իմ կամքի հակառակ՝ և անգիտութեամբ է եղել

—Որ երկար տարիք, աշխատած լինի
Գլխի հանճարը,
Եւ իմ ներկայութիւնն անհրաժեշտ գտնի
Դրսի աշխարհը.

Ահա մտածւած ու իմաստալից կեանքը։

Անհրաժեշտութիւնից բղխած իրը շուտով չէ անհետանում, որովհետև նա իսկապէս մի բանի համար է կանչւում. իսկ մարդը եթէ հրաւիրւած լինէր, երևի մի բանի էլ հարկաւոր կը գար. անմիտ կերպով գալ, խոզի նման տիղմերի մէջ թաւալւել միայն փորի համար, առանց անհրաժեշտութեան պէտքական լինելու, դա իմ կարծիքով իսկական անասնութիւնն է տիպերի տարբեր այլաբանութեամբ։ Անասունը անգիտակից է, նա զգում ու անում է այն՝ ինչ որ

արդէն ամբողջութիւն է դառել իր համար. այսինքն ուտել, նստել, սրճալ, խաղ գլխաւոր գիրը, որը կայանում է մարդուն գործօն հանդիսացող աշխատանքի մէջ, նրան այլևս չեն հարցնում և ոչ թողնում են նստել՝ ու սրճալ... Եթէ մենք զգում ենք, որ մեր *անգիտակցութեամբ* օգնում ենք ինչ որ մեզ երևակայական թւով չէնքի կառուցման, որ այսպէս ասած հաւատացած ենք, թէ մեր ատելով ճշմարտութեան ստիպում ենք տանել յաղթանակը, ապա ուրեմն մենք չենք վարանի «թափահարել մեր թևերը» որովհետև այդտեղ արդէն մեր առելու մէջ *իմաստ* ենք տեսնում:

Իսկ դրանից դուրս, ընդունելով որ կեանքում ամենայն ինչ փորձերի վրայ է հիմնւած, որ հենց մարդը, տիեզերքի երևակայական տիպի անաչող փորձն է, և որ նրա վերջինը շեղւել է իր նպատակից որ ինչպէս տեսնում էր, այդ հաստատում է և կեանքի էվօլիւցեան, ընդունելով մարդու, բոյսերի, կամ բնական աշխարհում ամեն մի կենդանի իրի աստիճանաբար զարգացումը, կարծում եմ՝ մեզնից որ և է մէկը *ամենագէտ* չի լինի ընդդիմելու, որ —մարդը առանց զարգանալու վերջին ստեղծագործութիւնն է, և որ բնութիւնը նրա մէջ իր ցանկացածը տեղն է դրել:

Այդ այդպէս կ'լինէր եթէ ընդունէինք որ՝

1) Արևի տակ ոչինչ աստիճանաբար չի զարգանում:

2) Որ աշխարհում սրանից յետոյ ոչ մի կենդանի իր մարմնու մէջ չ'պիտի նորանայ, կատարելագործւի՝ որից և առաջանում է փոփոխութիւնը: և

3) Որ եթէ ընդունենք ամեն աշխատանք իբրև կատարելագործւած ու վերջացած, այդտեղ արդէն բնութիւնը իր վերջակէտը պիտի դրած լինի (առանց զարգացման թէօրիայի) որից և առաջացած կ'լինի քարացած աշխարհի անկումն՝ ու քայքայումը:



Եւսան կեանքի մէջ զարգացման թէօրիան յաճախ գիտում է այլանդակութիւնների, սակայն դրանով մենք մեզ հակառակ չենք լինի, եթէ տիեզերքը իբրև փորձ ընդունելուց յետոյ՝ նրա միջոցների մէջ *անախաշականութիւն* փընտռէինք, բնական է, որ այդ ճօճումը կեանքի մէջ յարատև կայ, ու կմնայ. ընդունելով և զանազանակերպ ուղղութիւն, զարգացման թէօրիան դարձեալ կատարում է իր դերը, փոփոխելով տիպերը բնութեան՝ ու պայմանների առանձնայատկութեամբ: Այսպէս թէ այնպէս պարզ է, որ կեանքի *աստիճանաբար զարգացումը*՝ կամ հենց ինքնաբար փոփոխումը, մի բան է միայն ուզում ասել —*որ արևի տակ ամեն ինչ դեռ իր որոշ կատարելագործման չի հասած*...

Այդ բոլորից յետոյ եթէ բնութիւնը մեզ նման մի շարք *փորձնական դասերի* միջոցով, ուզում է իր կատարելագործման հասնել. ապա մենք նրա ձեռքում իբրև խաղալիք՝ կամ կոյր գործիք չենք լինի. ուրիշ բան է գործ ու նպատակին տեղեակ *խորհրդաւոր* ոյժը, ուրիշ իբրև փայտ նոյն նպատակին *ծառայեցնող* կոյր ու անգիտակից գործիքը... Մենք կ'հաշտւէինք բնութեան հետ, և իբրև առաջխաղաց աւանգարդ ու էտապ, կը շարունակէինք մեր կռիւը եթէ միայն նա բարեհաճէր, այսպէս ասած *պայմանաւորուել* մեզ հետ. այդ արդէն կ'լինէր մեր ձեռքում իբրև հրաւիրաթուղթ —որ մենք մի *գործի համար* թէկուզ հէնց վարձւած ենք, և դրան օգտաւէտ լինելու համար *գիտակցութեամբ աշխատում* ենք ի նկատի ունենալով կամ մեր *օրավարձը*, և կամ *արդիւնքի* կէսը իբրև *աշխատանք*:

Այստեղ արդէն անհատականութեան նախնական պրոցէսում դժւարամարսը դարձեալ սոցիալական պայմաններն է: Թւելով անհատի ստեղծման օրից մինչ այսօր, մենք տեսնում

ենք մի ստամոքս, որ աւելի ուժեղ կերպով մարդուն շահեցնել գիտէ իր համար, քան թէ ուղեղն ու երևակայութիւնը. սակայն ինձ աւելի թւում այդ ապրանքը որքան և պահանջկոտ լինի իր հերթին, նոյնքան թոյլ է ու մուրացիկ իդէալիստ գաղափարականի դէմ, և հէնց այդտեղ է անհատի ոյժի սքանչացումը, որ այդ երկու հակադիր ծայրահեղութիւններից մէկն ու մէկին չի զիճում։

Ես սիրում եմ անհատի դրամագրութեան մէջ գտնել այն անեղծուածային պրօբլեմը որը *կեանք* է կոչւում. այսպէս ուրեմն, ընդունելով ժամանակի փոփոխութիւնը որը ամեն մի րոպէ ազդում է մարդու տրամադրութեան վրայ, ինձ մնում է միայն գալ այն եզրակացութեան որ *տարբեր* ժամանակներում մարդուն կարելի է բաժանել և՛ զանազան *մասերի*, ուտեղ արդէն անհատի *ամբողջացման* ու ոյժի չքացումն ենք տեսնում, որով և հաստատւում է այն փաստը, որ մարդը ո՛չ թէ կոյր գործիք է մի զերբնական ոյժի, այլ ժամանակի, երևակայութեան, և մինչև իսկ եղանակի փոփոխման ձեռքում որոնք բոլորը իրար յաջորդելով մտնում են տրամադրութեան միացնող օղակի տակ, իսկ նա իր հերթին՝ ցանկացած ազդեցութիւնն է ունենում արդէն անհատի *կազմւածքի* վրայ։ Հետաքրքիր մի փաստ է նրբամիտ փորձողների համար, թէ ինչպէս այդպիսի դէպքերում մարդու թէ զգայարանքները, և թէ մարմնի մասերը հակւած են *մի տեսակ* հետևողականութեան տրամադրութեան ուղեկցութեամբ—*կամ բոլորը ուրախ, մելամաղձիկ ու տխուր, և կամ բոլորը գործունեայ, ծուլացած՝ ու քնահար.*—Հակադրութիւնն ու ըմբոստացումը հեռու են այդ զանգւածից, մի *փաղաքշական* խօսք, կամ մի *ակնարկ*՝ և ահա *ամբողջ մարդը* չինծու տպաւորութիւնից թելադրւած, *խմբում* է *մեկի* արտահայտութեան շուրջը։ Այդպիսի համախմբումների



ու միութիւնները կատարւում են և ուրիշ պարագաներում, ոյժի ազդեցութեան տակ *զանազան* տեսակ համախմբումների շնորհիւ, մարդը միշտ *չարիք* է եղել իր նման թոյլերի համար. միութիւնը այս դէպքում աւելի չարիք է, քան թէ անմիաբանութիւնը. ուրիշ բան է եթէ գա առաջացած լինի գաղափարական՝ կամ թէ դաւանանքի միանմանութիւնից. բայց ինչպէս մինչև այսօր զանազան աշխարհակալներ ցոյց են տուել, միութիւնը՝ ինչպէս և ազատութիւնը, եղել է մէկը միւսի փախից--*ոչնչացնենք միութիւնը, ջնջուած կըստանենք եւ ազգութիւնը.* անհատին նախ ուժեղացրէք, որ ինքը իրենից դուրս թէկուզ եղբօր ոյժին չը դիմի, և ահա բռնաւորները վերացած են աշխարհից։ Հօտային ինչ որ «քնագդից» թելադրւած՝ *համախմբւում* ենք, ու մեր ձեռքով գազաններ ստեղծում մեզ համար, և յետոյ նրա *օրէնքների* դէմ բողոքում—ծիծաղելի չէ ինչ է. թող մեռնի և՛ կեանքը, և՛ մարդը տիեզերքի մէջ, և եթէ նա նորից ստեղծւեց, ապա ուրեմն մի բանի պէտք է. իսկ եթէ չէ. զարգացման թէօրիայի զանազան ժամանակաշրջանում, առաջ եկաւ մի այնպիսի սերունդ՝ որը նոյնպէս բնութեան ձեռքում, եղաւ մի *խաբուսիկ միջոց* հետևորդներին ապրել դրդելու համար ինչպէս մարդը, այն ժամանակ կ՚հաստատէի, որ կեանքը իսկապէս ոչ մի միտք չունի իր մէջ, որից յետոյ գուցէ ես չուզենամ այդքան անարգանք կրելով մի ստամոքս կերակրել։ Իսկ ոմանց կարծիքով որ չի կարելի մի ամբողջ սերունդ խեղկատակ ռիսկի ենթարկել, լոկ միայն փորձի համար, ես կ՚պատասխանեմ որ – մենք մինչև այսօր նոյն նպատակի թէ՛ *արտադրածն ենք*, և թէ *ջարդուածը* որը դարձեալ փորձ է կոչւում—ամենքը իր համար, իսկ բոլորի համար ոչ ոք—ահա ինչն է մեծը։

Անմիաբանութիւնը պիտի թագաւորի ամեն մի հաստա-

բակ խմբի շուրջը, որ ոչ ոք որևէ գործում ուրիշի օգնութեան չ'դիմի, որի համար և անհատը՝ գործի մէջ չի խնայիլ իւր ամբողջ ույժն ու կորովը,—էնէրգիան, թաղելով ինքն իւր համար ասածւացքի մէջ, և ահա, տարիների ընթացքում ժամանակի ճանկերից խլած մի ուժեղ սերունդ, որ ոչ ոքի չի ճանաչում՝ բացի իրանից, առանց ուրիշի համար գալ լինելու, որովհետև իւր նմանն էլ նոյն քուրայումն է տաքացել որտեղ ինքը. ու հէնց այդտեղ էլ մենք կըտեսնենք զանազան տեսակ բռնաւորների՝ և պատուարի վերացումը, ու գիտութեան եղբայրացումը. սկզբունքային խնդիրներում առանց մի կէտ անգամ իրար զիջելու, որովհետև հէնց այդ կեղծ ու տափակ զիջողութիւնն է համախմբման հիմնաքարը գնում։

Այդ բոլորից յետոյ շատերը գուցէ կարծեն որ իմ ցանկացածը անիշխանական կոմմունիզմն է, սակայն սխալուած կըլինեն եթէ չ'խոստովանեն՝ որ անհատականութիւնն ու անիշխանականութիւնը ես այնքան եմ զանազանում իրարուց, որքան հպարտութիւնն ու գոռոզութիւնը չ'նայած որ երկուսն էլ միևնոյն ընտանիքին են պատկանում. չունևոր ընդհանրութիւնը թէև սերտ կերպով զինւել է կեղեքող թշնամու —կապիտալի դէմ, բայց չպիտի մոռանալ և այն, որ այդ բոլորը ժամանակաւոր է. ընդհանրութեան միացեալը թշնամին է որի միջոցով և ույժը, իսկ նրա (թշնամու) անհետանալուց յետոյ, միևնոյն ընկերականութեան մէջ դարձեալ կը գտնէք (թէկուզ իրանց կամքի հակառակ) բռնաւորութիւնների, ուղղութեան, կամ հենց դաւանանքի զարգացման տարբերութիւն, ընդունելով պայմանների ու միջավայրի ազդեցութեան անխուսափելիութիւնը, ինչպէս և մանր-մունր հաշիւներ. այստեղ դարձեալ զարգացման անողոք թէլօրեան է, իւր բնութեան՝ ու կլիմայի առանձնայատկութեամբ։



Այդ բոլորը ի նկատի ունենալով հարկաւոր է որ առաջ մի կողմից մանրացնել մարդկութիւնը, (իրարից զատելով) իսկ միւս կողմից բազմացնել՝ և ուժեղացնել անհատականութիւնը. ինչու պիտի մի ինչ որ հրամանի համար հազարաւոր բանակներ մահու գիրկը նետուեն. կամ մտածւած ու հասարակական ույժը որքան մեծութիւն է պարունակում իւր մէջ, միթէ, անհատին առանձին-առանձին չի՞ կարելի «քաղաքակրթել», կամ հասարակական խնդիրները ինչո՞վ կապ չունեին մարդու հետ.—մենակ մարդը ամենից ուժեղն է— բաւական չէ՞ հաստատելու այն միտքը, թէ մեծ վարդապետութիւնները տրամադրութիւնների՝ կամ որոշ ժամանակաշրջանի վրայ է հիմնւած, ինչպէս օրինակ Քրիստոս. երևակայութեան խաղաղ համակրութեան միջոցին, որ ազդեցութիւն է մոմենտի տպաւորութեան ու տրամադրութեան, նա յայտարարեց մի երեսը ապտակողին միւսն էլ դարձնել. (Նոր-ուխտ) իսկ մի ուրիշ տեղ ակն ընդ ական Մովսիսականութիւնը. (հին-ուխտ) միևնոյն շկօլայում սնւած ու մեծացած Քրիստոս, ժամանակի ու տրամադրութեան տարբեր պայմաններում հակառեց իւր նախորդին. (ես չեմ եկել մարգարէների շինածը քանդելու, այլ լրացնելու) և այն բաժանեց հին ու նոր ուխտերի, առանց մտածելու որ եթէ ինքը ջնջող է, ուրեմն և շարունակող է իւր ուսուցչի կիսատ թողածը առանց ծրագրից շեղւելու. իսկ եթէ նա մտադիր էր ոգիաչական մտքերով պատւաստել ժողովըրդին հէնց իրանից սկսելով, ապա ուրեմն նա բացարձակ պիտի ժխտէր Մովսիսականութիւնը, բայց այդ նա չէր կարող, որովհետև նրանք բոլորը պատկանում էին միևնոյն շկօլային։

Այստեղ արդէն երևակայութեան ու տրամադրութեան տպաւորութեան հետ, մենք տեսնում ենք և ժամանակի ազդեցութիւնը Քրիստոսի մտքերի վրայ. տարբեր միջավայրն

ու պայմանները՝ որոնց ծոցում մարդը զգացել է իր հաղթելու անհրաժեշտութիւնը, մեզ տալիս են ասելու որ այդ մարդիկ առանց իմաստուն լինելու, ժամանակի արտայայտութիւններ են. իսկ երբ մարդը ժամանակի հետ միասին և նրա հոգու արտահայտիչն է լինում, այդ արդէն պարզ է որ մի գերբնական ույժ այդտեղ դարձեալ իր յատուկ միտումն է ունեցել, կապելով ժողովրդին ժամանակի ոգու հետ։ Բոլշևիկութեան այդ չափի խարխափումը, որը ցոյց է տալիս մարդը իր նախնական շրջանում, հաստատում են՝ որ նա դեռ սկզբից խնամակալութեան տակ է եղել առանց անկախ ու ինքնիշխան գործելու յատկութիւն ունենալու. ուրեմն նա միշտ կախումն է ունեցել, նրան միշտ հարկադրել են որ սրան ու նրան յարմարւելուց յետ, իր ոգու արտայայտութիւնն էլ չափած ձևած պահի դուրս չ'գալու համար պատշաճութեան սահմանից,—դրան մենք ասում ենք բռնապետող կամք, լինի նա մի երկրի պետ՝ կամ թագաւորութիւն որը սկիզբն է առնում մի խումբ ուժեղ համախմբողներից, կամ հէնց կուսակցութիւններից, որոնց ծրագիրը մշակում են դարձեալ մի քանի հատ անհատներ, որոնք՝ այսպէս ասած առանց մարդու հոգու թափն ըմբռնելու, նորից նրան դնում են պատրաստած շրջանակի մէջ։ Ազատ ու ինքնիշխան կամքը բռնաւորների մէջ միայն այլանդակութեան է հասել, այդ ծայրահեղ միապետները մոռանում են, որ միևնոյն ատեանի վրայ զուգնթացաբար դնում է և ուժեղ խիղճը. անկախ կամքը, իր կողքին ունի և անկախ խիղճ—միակ դատաւորը ինքնիշխան անհատականութեան, որը դարձեալ իր յատուկ արշինը ունի. ասենք էական ու գործնական խնդիրներում ամեն մարդ ունի իր սեփական մակոխը, և հէնց դրա համար ես օրինակ ստեղծագործութեան շրջանում չեմ ճանաչում և ոչ մի «չափ ու ձև», դա



կարող է ոչ մի նշանակութիւն չունենալ իմ որոշ ծանրութիւն ունեցող բաղաժի վրայ, սակայն պէտք ընդունել որ յաճախ գիտութիւնից փոխ առած բևեռը, իր բռնազբօսիկ ազդեցութիւնն է ունենում ոգու բնական արտահայտութեան ձևերի վրայ։ Գիտական մի այդպիսի կրիտերիում որ չի կարելի երբէք արդարացի համարել, ստեղծագործող ոգուն պատշաճաւոր շրջանակի մէջ պահելուց դատ, նրան դարձրել է և իր կամքի արտահայտիչը ինչպէս մենք ժամանակի. այստեղ դարձեալ մենք տեսնում ենք ոգու վառ զեղման երկու տարբեր ճիգաւորում, հանճարը չընդունելով և ոչ մի պատուար (որ նշանակում է չափ ու ձև) իր բնական գունով է պատկերանում մեր առաջ, այն ինչ տաղանդը ամեն ինչ յարմարեցրել է իր յարմարւող ֆինալին, ցանկութեան. այդ երկու Աստուածներից մարդը գերբնական ու ամենակարող է ճանաչում հանճարին, և այդ պերճախօս փաստով հաստատում՝—որ ինքը հակւած է սահմաններ չ'ճանաչող ինքնիշխան լինելու. բայց պէտք չ'մոռանալ և այն, որ անհատական միայն նա է, ով ինքը անկախ լինելուց դատ ուրիշի համար օրէնքներ չի մտածում նրան տիրելու համար։

Մահմէդը գեաւուրի մալը մի տեղ հարամ է յայտարարում, իսկ մի ուրիշ տեղ հալալ. բնական է որ այդ միջոցին նա տրամադրւած էր բաղանչութեան, քան թէ ժողովրդի համար մի բարոյական ուղի ցոյց տալու կոդեքս կազմելու։ Տրամադրութեան այդպիսի հիմունքների վրայ հիմնւած, ծրագրային որև է կէտ առաջ տանելու համար, դիմել զանազան տեսակ համակրողների, կամ կուսակցութեան ույժին, ժողովրդի մէջ սեփական վարդապետութիւնը տարածելու, դա միևնոյն բռնակալական օրէնքն է որքան ներկայ բիւրօկրատիկ կառավարչականը. մէկից, կամ մի քանիսից (այդ արդէն կուսակցութիւն է) սկիզբն առած մի միտք, չ'պիտի բոլորի

համար օրէնք ծառայի որքան և նա դրած լինի դէմոկրատիկ հիմքերի վրայ. եթէ ընդունենք այդ, պէտք ընդունենք և ներկայ կառավարութիւններին որովհետև նրանք էլ «իրանց տեսակի» յաղթող, և մի «որոշ» շրջանում համակրութիւն վայելող կուսակցութիւններն են:

Կուսակցութիւնները նմանւում են գիւղական այն հին վաշխառուին, որը փողը իբրև պարտք տալուց յետոյ խը-նամակալութեան տակ է առնում պարտապանին իւր տոկոսների համար. այդտեղ արդէն անհետանում է ազատ մարդը, տեղի տալով ինչ որ անկամք հաճոյակատարի: Ազ-գը, դասակարգը, կամ ցեղը կապուած է իրար հետ մի ընդ-հանուր ընտանեկան գօտիով որին մենք ցեղակցութիւն և յաճախ նացիոնալիզմ ենք անուանում, դրանից վրայ ուրիշ ոչինչ չի աւելացնում կուսակցութիւնը բայց եթէ ազգային պաշտամունքի, սովորութիւնների, կամ երեսին աջից ձախ խաչակնքելու կանոնաւորութեամբ իրար մօտեցնող դաւա-նանքի մի աւետարան. մշտական զինումը ստեղծել է մեզ համար մի այնպիսի պատւար, որ դրանից դուրս քիչ է մնացել իրար չը ճանաչենք իբրև մարդ: Զատ-զատ և միա-ւին ապրող մարդը, չ՚ընդունելով այլեւս իրար միացնող ազ-գային այդ տեսակ մի ընդհանուր կապ, վարդապետութիւն՝ կամ դաւանանք, բացի մարդ լինելուց, նա արդէն կ՚պատ-կանի մի հասարակութեան՝ որին հէնց ինքը անդամ է. այս-տեղ արդէն վտանգի (միութիւնը վտանգից է առաջանում) թէ մի որ և է ձախորդութեան դէպքում հասարակութեան միևնոյն անդամի պատասխանատուութեան, կամ օգնելու պարտականութիւնը, ընկնում է միևնոյն հասարակութեան վրայ այլ ոչ իբրև ընտանիքի հօր, եղբօր, բարեկամների, ու-ցեղի վրայ: Կեանքի մի այսպիսի էվոլիւցիայում, զարգացման այս ձևը՝ առաջ է գնացել անասունների մէջ, այդ հասարա-



կութիւնը այս խնդրում աւելի բարձր է կանգնած, քան թէ մարդկութիւնը. զաւակը մի որոշ բարձրութեան հասնելուց յետոյ՝ երբ արդէն առանց կաթի կարող է ապրել, մայրը այլևս նրան չի ճանաչում, նա այնուհետև դառնում է ան-դամ միևնոյն հասարակութեան որին և ծնողները. զարգաց-ման այդ տիպի համայնականացումը հասել է իւր ծայրում ծնողների ով, և կամ ում լինելը. վերցնենք հէնց օրինակ գոմէշներին, այդ համբերատար կենդանիները, երբ իրար հետ կամ իրանցից դուրս մէկն ու մէկը վէճի է բռնւում, մնա-ցած հասարակութիւնը որոճալով դիտում է միայն. պատա-հում է և այնպէս, որ երկու հակառակորդներից մէկը տեղի է տալիս միայն մահով, այդպիսի դէպքում շարիքը դարձեալ կրկնւում է անհատների մէջ առանց մի որ և է կապով վարակելու ամբողջ հասարակութիւնը (ինչպէս ազգերի իրար վրայ վազելը, կամ հայ-թիւրքական): Այս դէպքում՝ իւր յաղթութեամբ կուրացած (միութեան զինումով որի մէջ է և ոյժը) ուժեղ ազգերի զինաթափումը ես բաժանում եմ երեք շրջանների:

1) ԶԻՆՄԱՆ ՇՐՋԱՆ

Որ թոյլերի անվերջ վախից մարդկութիւնը նախ բա-ժանւել է ազգերի, և միութեան մշտական զինումով հասել ներկայ միլիտարիզմական ժամանակին:

2) ԶԻՆԻԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ:

Որ դասակարգային կռիւը նման է պատերազմից յետոյ մի փոքրիկ զինադադարի, որից յետոյ հարկը պահանջած ժամանակ մի համայնքի պատկանող մարդը, պէտք օգտի դարձեալ իւր հին արսենալից և

3) ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՇՐՋԱՆ

Որ անհատականութիւնը կ՚տիրէ մարդկանց անջատ-ւել իրարից, որից և կառաջանայ ամեն «կապերի» ոչնչա-

ցումը, ու կլինի մի ամփոփում ու նպատակ -- *Մարդկային հասարակութիւն*։

Նախընթաց երեսում մենք ընդգծեցինք այն հարցը, թէ ինչպէս անասունները, երբ իրանցից մէկն ու մէկը միւսին սպանելու վրայ է, լուռ հանդիսատեսներ են մնում միայն. դա մարդկային տեսակէտով աւելի քան անասնութիւն է ու մարդասպանութիւն, սակայն այդ նոյն մարդիկ մոռանում են որ այդպիսի դէպքերում իրանք ոչ թէ *դիտող* մեղսակիցներ են լինում ասպարէզը թողնելով երկուսին, այլ թէ յաճախ մի ամբողջ քանակ մասնակցում է մէկի սպանութեան. այս դէպքում աւելի արդարացի է առաջին տեղը տալ անասնական տրամաբանութեան —ոչ մէկին և ոչ միւսին— քան թէ մարդկային. չնայած որ ի նկատի ունենալով և գործողութեան արժէքը, այդ տեսակէտը առաջ եկած լինի անասուններին գլխում թէկուզ հէնց անգիտակցութեամբ. այսպէս թէ այնպէս չեզոքացրած կռիւը, չեզոքացրած մահ է որի համար մէկի փախուստը բաւէ և ազատի նրան վրէժխնդրութիւնից, այն ինչ օգնելու տենդով բռնուած նեղ թայֆայականութիւնը շատ ժամանակ բորբոքել է միայն կռիւը ու հրդեհ առաջացրել։

Մեր տեսակէտի շրջանների վերածած առաջին կատէգորիան, կարելի է բաժանել և երկու կարծիքների. այնպէս որ եթէ թոյլերը վախից *ստիպուել* են միանալ, կ'նշանակէ և ուժեղները *ձգտել* են *տիրանալ*, այնպէս որ երկու դէպքումն էլ *հաղթողը* միշտ եղել է ուժեղներից։ Շահագրգռուած տիրանալու տենչով, այսպիսով եթէ քըրքրենք պատմութեան ներսը, մենք կ'տեսնենք որ մի ինչ որ նեղ՝ ու խառնուած «ես» միշտ օգտուել է ամբոխի տգիտութիւնից, և իր շուրջը խմբել խաժամուժին մի քանակ, իսկ երբ ժամանակը արդէն իր կնիքն է դրել նրանց վրայ, պայմանների



ու միջավայրը յայտարարել են դրանց իբրև կատարուած...
Ես ուզում եմ իրար առաջ դնել երկու հակադիր ուժեր, որ տիրանալու կամ տիրելու կողմից ոչնչով չը գերազանցեն միմեանց. իսկ ինչ մնաց բնութեան գերազանց ուժի դէմ, մարդը կամ պիտի յաղթի, կամ թէ չէ իր *անկարողութիւնը* տեսնելով *ոչնչիզմին* պիտի յարի, կազմելով իրար առող պեսսիմիստա-յուետեսական մի քանակ, որտեղից առաջանում է արդէն *կեանքի նահանջը*...

Այստեղ արդէն երկուսի պանթէիզմը ստիպում է մարդուն երեւակայութեամբ ապրել. հերքելով ամեն ինչի չը լինելը, չ'զարմանար եթէ ասեմ որ այս խնդրում ես էլ հակուած եմ Աստուածապաշտ լինելու, որովհետև դա իսկապէս երևակայութեան ծնունդ է։ Ամեն մի փորձի առաջ երբ մարդը իր *անկարողութիւնն* ու *անկումն* է տեսել, ճշմարտութիւնից սկսել է փախուստ տալ, գիտմամբ ինչ որ յոյսերի գերբնականութիւն խառնելով նրա հետ ինքնախաբութեամբ պարապելով. այստեղ զարմանալ բնական կեանքը չէ որ ստիպում է նրան պանթէիզմը երգել, այլ *մարդու իրան կորցնելու* վախը, --չէ՞ որ նա ափիոն է ծխում *միշտ մոռանալու համար*... Տպաւորութիւնների մի այդպիսի շրջանում, ուր միտքը իր երազով համակրութիւնն է առաջարկում ժամանակի վաճառման, երևակայութիւնը *երկու կողմից* էլ մնում է իբր *բեղմնաւորող* ուժ, որին այնքան գեղեցիկ կերպով ծառայեցնել պէտք ապրելու *արարողման*...

# I.

*Կեանքի իմաստն ու հիասթափութեան արդիւնքը, կիրք. մարդը իբրև անհատականութի ստեղծուած, մտքի ինքնախուզութիւնն ու անկախութիւնը. անընդհատ կեանք, ու գիտութեան անգիտանումը, մարդկութեան վերլուծումը ստեղծագոր-*

ծոզի տեսակետով ու այլանդակումը. տիեզերքը իբրեւ արմատական սխալ, կամ երկունքի հիւանդ արտադրում անհասի բարձրացումը իր նման ստեղծողի հաւասար, եւ երեւակայութիւնը իբրեւ Աստուած. վարդապետութիւն երի խթան հանդիսանալը կեանքը ապրեցնելում, եւ մարդկութեան բաղումը փակացծի մէջ. նահանջում, մահ, եւ ոչնչութիւն. մարդը իբրեւ ստեղծագործութեան փորձ. եւ այդ փորձի անաջողութիւնը.—տաղանդ եւ հանճար:

# II

«Ես»-ը իբրեւ անհատականութեան էութիւն. մարդը Աստուծոյ դերի մէջ. եւ յոյսը սոսկ մի պատրանք հիասքանչութիւնը ճողարկելու համար. տրամադրութիւնը իբրեւ միակ գործօն, իսկ կամքը նրա շուրջը պտտող առանցքը. մարդկային շէնքը իբրեւ տիեզերք, իսկ սիրտը գերբնական ու գործադրող ոյժ. նիւթի փչացումն ու ամբողջութեան ոչնչացումը—չըկայ մեծութիւն...

ՀԱՅ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
Публичная Библиотека им. А. Мясникяна
7/

ՀՀ Ազգային գրադարան
NL0151429